ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/106

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.06.2019թ. թիվ /26/10899-2019 գրությամբ «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 20.06.2019թ. թիվ Ե/40/1491-19 գրության հիման վրա, 28.06.2019թ. թիվ /26/10899-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերություններին (հետայսու նաև՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն:

«Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի միջև 16 մայիսի 2019թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի 2.2. կետի համաձայն՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ցանկացած հիմնավորված պահանջ՝ ուղղված ընթացակարգի փաստաթղթերի լրացմանը և հստակեցմանը:

Պայմանագրի 2.7-րդ կետի համաձայն՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել ապրանքի մատակարարումը:

Նույն պայմանագրի 4.3 կետի համաձայն՝ կոնսորցիումի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից ստանձնած պարտավորությունների համապատասխան:

Նույն պայմանագրի 4.5 կետի համաձայն՝ կոնսորցիումի կողմերը պարտավոր են կատարել բոլոր այն պարտականությունները, որոնք ստանձնել են նշված պայմանագրով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ առաջարկել է շտկել՝ ներկայացված համատեղ գործունեության պայմանագիրը, մասնավորապես՝ համատեղ գործունեության պայմանագրում հստակեցված չէ յուրաքանչյուր անդամի հրավերով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորման ստանձնումը, շահույթի բաշխումը:

Արդյունքում «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցում/ կողմից կատարվել էր շտկումը և գնահատող հանձնաժողովին ներկայացրել՝ համատեղ գործունեության պայմանագրի շտկում-լրացումը՝ կնքված 31.05.2019թ:

Վերոհիշյալի արդյունքում «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ ճանաչվել են առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ առաջարկելով՝ սահմանված եռօրյա ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցում/ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 47-րդ կետի պահանջներով, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունը:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը՝ սահմանված ժամկետում արձանագրված անհմապատասխանությունները չշտկելու հիմքով:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին /կոնսորցիում/ առաջարկելով՝ սահմանված եռօրյա ժամկետում ներկայացնել որակավորումը հավաստող փաստաթղթերը:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 3 կետով՝ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն արձանագրվել են ներկայացված Հավելված 6-ում, Հավելված 6.1-ում, նաև նմանատիպ պայմանագրերը ներկայացվել են ուկրաիներենով, չեն ներկայացվել հաշիվ-ապրանքագրերը և ներկայացված թիվ 39/17 պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումները՝ ստորագրված և կնքված չեն:

Այսպիսով, համաձայն «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի միջև 16 մայիսի 2019թ. կնքված համատեղ գործունեության /կոնսորցիում/ պայմանագրի 2.2. կետի՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ցանկացած հիմնավորված պահանջ՝ ուղղված ընթացակարգի փաստաթղթերի լրացմանը և հստակեցմանը:

Նույն պայմանագրի 4.3 կետի համաձայն՝ կոնսորցիումի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից ստանձնած պարտավորությունների համապատասխան, իսկ 4.5 կետի համաձայն՝ կոնսորցիումի կողմերը պարտավոր են կատարել բոլոր այն պարտականությունները, որոնք ստանձնել են նշված պայմանագրով:

Համաձայն՝ 31.05.2019թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի լրացման թիվ 6.6 կետի՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է ներկայացնել «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչը ...:

Վերոհիշյալ համատեղ գործունեության պայմանագրի վկայակոչված դրույթներից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի 2.7 կետի համաձայն՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է իրականացնել ապրանքի մատակարարումը, իսկ արդեն 31.05.2019թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի լրացման թիվ 6.6 կետի՝ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է ներկայացնել նաև «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչը՝ ուստի գնումների հետ կապված բողոքներ քննող անձին Ընկերությունը տեղեկացրել է, որ Հավելված 6, Հավելված 6.1՝ ապրանքի տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև նմանատիպ պայմանագրերը և հաշիվ-ապրանքագրերը, լրացնելու և շտկելու պարտականությունը կրում էր «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն, ուստի ակնհայտ է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն նշված ընթացակարգի շրջանակում չի ստանձնել պարտավորություն կազմել և/կամ կատարել համապատասխան շտկում նշված փաստաթղթերում:

Վերոհիշյալ փաստը ապացուցվում է նաև «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությամբ, որով հավաստվում է, որ կնքված կոնսորցիումի պայմանագրի համաձայն՝ հայտում, այդ թվում նաև ընթացակարգի այլ փաստաղթղերում շտկում կատարելու պարտականությունը դրված է «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի վրա, որն էլ պատասխանատվություն է կրում նշված պարտավորության պատշաճ կատարման համար:

Ուստի Ընկերությունը գնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանզի վերագրվող պարտավորությունը կրել է ոչ թե «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն, այլ «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Ընկերությունը խնդրել է «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/106 ընթացակարգի շրջանակներում 08.07.2019թ. ժամը 10:35-ին

հրավիրված նիստի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.06.2019թ. թիվ Ե/40/1491-19 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար տվիչների ձեռքբերման նպատակով սույն թվականի մայիսի 22-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավեր: Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը: Գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ, թիվ 1 և 2 չափաբաժիններով ներկայացված ցածր գնային առաջարկով 1-ին տեղ է զբաղեցրել «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

06.06.2019թ. Կոնսորցիումը գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել է հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որոնք տրամադրվել են գնահատող հանձնաժողովին:

11.06.2019թ. հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ՝ Կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նպատակով, որի ընթացքում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջներին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն, Կոնսորցիումին տրվել է մեկ աշխատանքային օր՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով, սակայն շտկման փոխարեն «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենը գնահատող հանձնաժողովին հասցեագրված նամակ է ուղարկել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/106 ընթացակարգի շրջանակներում 08.07.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/106 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/106 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 11.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Կոնսորցիումը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Կոնսորցիումի կողմից չեն շտկվել արձանագրված անհամապատաս-խանությունները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.06.2019թ. թիվ /26/10899-2019

գրությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 20.06.2019թ. թիվ Ε/40/1491-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել

հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային

եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 11.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար նմանատիպ (համանման) պայմանագրերը ներկայացվել են ուկրաիներենով, ներկայացվել են միայն թիվ 1802000937 և թիվ 39/17 պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումները, որոնք ստորագրված և կնքված չեն, իսկ թիվ 14547/53-124-01-09209 պայմանագրի կատարման վերաբերյալ ոչինչ ներկայացված չէ, չեն ներկայացվել հաշիվ-ապրանքագրերը, առկա են անհամապատասխանություններ նաև ապրանքի տեխնիկական բնութագրում:

Կոնսորցիումը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն

հիմնավորմամբ, որ Կոնսորցիումի կողմից չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կոնսորցիումը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, իսկ հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի

(չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր), մինչդեռ Կոնսորցիումի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը և ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար Կոնսորցիումի կողմից ներկայացված վերոհիշյալ հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 7-րդ ենթակետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերությունների միջև 16.05.2019թ. կնքված կոնսորցիումի պայմանագրով նախատեսված է եղել, որ յուրաքանչյուր կողմ ներդնում է իր փորձառությունը: Ինչ վերաբերում է 31.05.2019թ. կնքված կոնսորցիումի պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրին, որով մասնագիտական փորձառությունը ներդնելու պարտականությունը դրվել է միայն «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ի վրա, ապա արձանագրում եմ, որ նշված համաձայնագիրը կնքվել է Կոնսորցիումի կողմից հայտը ներկայացնելուց հետո, հետևաբար Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորման շրջանակներում ստանձնած պարտականությունները գնահատելիս հիմք է ընդունվում ի սկզբանե հայտով ներկայացված կոնսորցիումի պայմանագրի դրույթները, որոնց համաձայն թե «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն ստանձնել են փորձառություն ներդնելու պարտականությունը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Արմատ-Գրուպ» ՍՊԸ-ն և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-88/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում խախտել են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, ուստի առկա են ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.06.2019թ. թիվ /26/10899-2019 գրությամբ «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմատ-Գրուպ» և «ՈՒԱՄ» ՆՊՊ» ՍՊ ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**